

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՇԱՀԲԱԶՅԱՆ ՍԵՎԱԿ ՍԱՆԱՍԱՐԻ

**ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ՃԱՐՊԱԿԱԼՈՒՄՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ
ՍՏԱՄՈՔՍԻ ԵՐԿԱՅՆԱԿԻ ՄԱՍՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՈՎ
ԲՈՒԺՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

**ԺԴ. 00.15 «Վիրաբուժություն» մասնագիտությամբ
Բժշկական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026 թ.

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РА

**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ МЕДИЦИНСКИЙ
УНИВЕРСИТЕТ ИМ. МХИТАРА ГЕРАЦИ**

ШАХБАЗЯН СЕВАК САНАСАРОВИЧ

ОСОБЕННОСТИ ЛЕЧЕНИЯ И ПУТИ УЛУЧШЕНИЯ КАЧЕСТВА ЖИЗНИ

ПАЦИЕНТОВ С ПАТОЛОГИЧЕСКИМ ОЖИРЕНИЕМ

МЕТОДОМ ПРОДОЛЬНОЙ РЕЗЕКЦИИ ЖЕЛУДКА

14.00.15 «ХИРУРГИЯ»

АВТОРЕФЕРАТ

**ДИССЕРТАЦИИ НА СОИСКАНИЕ УЧЕНОЙ СТЕПЕНИ
ДОКТОРА МЕДИЦИНСКИХ НАУК**

ЕРЕВАН – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Մ. Հերացու անվան ԵՊԲՀ

Գիտակոորդինացիոն խորհրդում՝ 2023թ., դեկտեմբերի 28-ի թիվ 7 նիստով:

Գիտական խորհրդատու՝ Բ.Գ.Պ. Զ.Ա. Տեր-Ավետիքյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բ.Գ.Պ. Ս.Լ. Օրդույան
Բ.Գ.Պ. Ա.Կ. Հովհաննիսյան
Բ.Գ.Պ. Գ.Ա. Համբարձումյան

Առաջատար կազմակերպություն՝ «Միքայելյան» վիրաբուժության ինստիտուտ:

Պաշտպանությունը կայանալու է 2026 թ. փետրվարի 6-ին, ժամը՝ 15:30-ին Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանում գործող 027 «Վիրաբուժություն» մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ Երևան, Կորյունի 2:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊԲՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 5 հունվարի 2026 թ.

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար



Բ.Գ.Պ. Ի.Է. Մալխասյան

Тема диссертации утверждена на заседании N7 Научно-координационного совета Ереванского Государственного Медицинского Университета им. М. Гераци 28 декабря 2023 г. (протокол №7)

Научный консультант: д.м.н. . З.А. Тер-Аветикян

Официальные оппоненты: д.м.н. С.Л. Ордуян

д.м.н. А.К. Оганесян

д.м.н. Г.А. Амбарцумян

Ведущая организация : «Институт хирургии Микаелян» АОЗТ

Защита диссертации состоится 6 февраля 2026 г. В 15:30 на заседании Специализированного совета 027 «Хирургия» при Ереванском Государственном Медицинском Университете им. М. Гераци (адрес: 0025, Ереван, ул. Корюна 2).

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕрГМУ

Автореферат разослан 5 января 2025г.

Ученый секретарь
Специализированного совета



д.м.н. И.Э.Малхасян

Թեմայի արդիականությունը

Մարդկանց ներկայիս, նստակյաց ապրելակերպով և ընդունվող սննդի բարձր կալորիականությամբ պայմանավորված, կենսամիջավայրը հաճախ բնութագրվում է որպես «գիրածին» կամ գիրացմանը նպաստող: Այս գործոնների համադրումը, որպես կանոն, հանգեցնում է օրգանիզմի կողմից ստացված էներգիայի թերծախսի, ինչն էլ, իր հերթին, նպաստում է գիրացմանը: Վերջինս թվայնորեն արտահայտվում է մարմնի զանգվածի ինդեքսով (ՄՁԻ), որը 30 և ավել կգ/մ² ցուցանիշի դեպքում որակվում է որպես գիրություն կամ ճարպակալում: Տարբերում են ճարպակալման երեք աստիճան՝ առաջին՝ ՄՁԻ 30–35 կգ/մ², երկրորդ՝ ՄՁԻ 35–40 կգ/մ² և երրորդ՝ ՄՁԻ ≥ 40 կգ/մ²:

Ախտաբանական գիրությունը բազմաթիվ էկզոգեն, էնդոգեն պատճառների և ախտաբանական մեխանիզմների, սննդային վարքագծի խանգարումների, ինչպես նաև, օրգանիզմի կողմից էներգիայի ոչ համարժեք ծախսի արդյունքն է: Գրեթե բոլոր գեր հիվանդները ունեն մետաբոլիկ համախտանիշ, որն իր մեջ ներառում է նյութափոխանակության այնպիսի խանգարումներ, ինչպիսիք են շաքարային դիաբետը, ինսուլինի նկատմամբ ռեզիստենտությունը, ճարպային փոխանակության խանգարումները և այլն: Սիրտանոթային պաթոլոգիաների, քաղցկեղի, վերարտադրողական դիսֆունկցիայի և հոգեկան խանգարումների զարգացման ռիսկերը հարյուրավոր անգամ ավելի բարձր են ախտաբանական գիրություն ունեցող մարդկանց շրջանում:

Վերջին տասնամյակների ընթացքում աշխարհում գիրությամբ տառապող բնակչության թիվը աճել է ավելի քան 27%–ով: Չնայած այն հանգամանքին, որ վերջին տարիներին զարգացած երկրներում նկատվող գիրացման աճի տեմպերը որոշակիորեն դանդաղել են, այս կոնտինգենտի մոտ սկսել են գերակշռել բարձր աստիճանի գիրության դեպքերը:

Ճարպակալումը մարդկության գլոբալ բժշկասոցիալական խնդիրն է, որը բարձրացնում է բժշկական օգնության ծախսերը և վատթարացնում հիվանդների կյանքի որակը: Հավելյալ քաշը և գիրությունը դասվում են հաշմանդամության և մահվան հանգեցնող ռիսկի գործոնների շարքին:

Ըստ Lobstein T. և այլոց (2023)՝ այսօր ավելորդ քաշ ունեցող մեծահասակների թիվը գերազանցում է 2,6 միլիարդը, որից 988 միլիոնը (բնակչության մոտ 14%–ը) գեր են: Չնայած ակտիվ ապրելակերպի և ճիշտ սնվելու քարոզչությանը, Գիրության համաշխարհային ֆեդերացիայի (World Obesity Federation) 2023 թվականի գեկույցում ներկայացված ճարպակալման տարածման տեմպերը վկայում են դեպքերի կայուն աճի մասին: Փորձագետների հաշվարկներով մինչև 2025 թվականը գիրությամբ կտառապի երկրագնդի բնակչության մոտ 17%–ը, և, 2030 թվականին այն կհասնի 20%–ի: Հայտնի է, որ գիրության դեպքերի մեկ երրորդը բաժին է ընկնում ԱՄՆ–ին, Չինաստանին, Բրազիլիային, Հնդկաստանին և Ռուսաստանի Դաշնությանը:

Գիրության դեմ տարվող պայքարը (սննդակարգի կարգավորում, ապրելակերպի արմատական վերանայում, դեղորայքային միջամտություն), ցավոք, չունի պատշաճ արդյունավետություն, և հիվանդության ավանդական եղանակով բուժման դեպքում ցանկալի արդյունքի է հասնում հիվանդագին գիրություն ունեցող հիվանդների ոչ ավել քան 10%–ը:

Ըստ ԱՄՆ Առողջապահության Ազգային Ինստիտուտի ուղեցույցների՝ վիրահատական միջամտությունը ի սկզբանե ցուցված է եղել ≥ 40 կգ/մ² ՄՁԻ կամ ≥ 35 կգ/մ² ՄՁԻ և ուղեկցող հիվանդություններ (զարկերակային գերճնշում, 2–րդ տիպի շաքարային դիաբետ, քնի ապնոէ և այլ) ունեցող անձանց: Ժամանակի ընթացքում բարիատրիկ վիրահատությունների ցուցումները որոշակիորեն ընդլայնվել են՝ ներառելով նաև 30–35 կգ/մ² ՄՁԻ և 2–րդ տիպի շաքարային դիաբետի համադրությունը, եթե բացառված են հիվանդության ընթացքի վրա ազդելու այլ գործոնները: Այնուամենայնիվ, բոլոր ուղեցույցներում նշվում է, որ բարիատրիկ վիրահատություններին դիմելուց առաջ հիվանդներին պետք է փորձել բուժել կոնսերվատիվ մեթոդներով, և միայն վերջիններիս անարդյունավետության դեպքում պետք է դիմել վիրահատական բուժման:

Հարկ է նշել, որ գիրությունը նպաստում է փոխկապակցված, այդ թվում՝ երկրորդ տիպի շաքարային դիաբետի, զարկերակային գերճնշման, սիրտանոթային հիվանդությունների, քնի ապնոէի և այլ հիվանդությունների զարգացմանը, ինչն էլ, իր հերթին, բերում է կյանքի տևողության կրճատման: Ըստ որոշ տվյալների՝ գիրության (և վերջինիս հետ փոխկապակցված ախտաբանությունների) հետևանքով ամեն տարի մահանում է մոտ 2.8 միլիոն մարդ: Խնդրի արդիականության մասին խոսում է նաև այն, որ մի շարք միջազգային առողջապահական կազմակերպություններ ճանաչել են գիրությունը որպես առանձին հիվանդություն:

Նման իրավիճակը պահանջում է փնտրել այս խնդրի լուծման այլ ուղիներ, հատկապես, ներկայումս ամենարդյունավետ համարվող վիրահատական մոտեցումների ոլորտում:

Բարիատրիկ վիրահատությունների՝ տարբեր պոպուլյացիաների քաղցկեղի ռիսկերին վերաբերող հետազոտությունների արդյունքները բավական հակասական և տարաբնույթ են, ինչն արժևորում է հիվանդների մոտ ուռուցքաբանական պաթոլոգիայի զարգացման և բարիատրիկ միջամտությունների միջև փոխհարաբերությունների ուսումնասիրության անհրաժեշտությունը, հատկապես, հայ ազգաբնակչության շրջանում: Այս առումով առանձնապես արդիական է բարիատրիկ հիվանդների մոտ ուռուցքաբանական վիրահատությունների տեխնիկական բնութագրերի և արդյունքների, ինչպես նաև ուռուցքաբանական, ներառյալ ստամոքսի քաղցկեղի պաթոլոգիաներով, հիվանդների բարիատրիկ վիրահատությունների ուսումնասիրությունը:

Ճարպակալմամբ պայմանավորված քաղցկեղի բուժման մեջ բարիատրիկ վիրաբուժության դերի պարզաբանմանը միտված հետազոտ ուսումնասիրությունները, վստահաբար, կնպաստեն քաղցկեղի կանխարգելման անհատականացված ռազմավարությունների մշակմանը և իրականացմանը:

Բարիատրիկ վիրահատությունների բոլոր վաղ և ուշ բարդությունները որոշ չափով «փակուղային» իրավիճակներ են, քանի որ դրանք պայմանավորված են ոչ այնքան տեխնիկական սխալներով, որքան նյութափոխանակության և ստամոքս-աղիքային ուղու կենսադինամիկայի՝ ուղղակիորեն վիրահատական միջամտության արդյունքում առաջացած փոփոխություններով: Վերոնշյալը պայմանավորում է բարիատրիկ վիրահատական տեխնիկայի բարելավված մոդիֆիկացիաների մշակման և հիվանդների հետվիրահատական տարբերակված վարման արդիականությունը:

Վերջին տարիներին ՀՀ-ում նույնպես ախտաբանական գիրությամբ տառապող մարդկանց բուժման նպատակով ակտիվորեն կիրառվել են բարիատրիկ վիրահատություններ, մասնավորապես՝ լապարոսկոպիկ եղանակով ստամոքսի երկայնակի մասնահատման ճանապարհով: Սակայն ՀՀ բնակչության շրջանում բուժման կարճաժամկետ ու երկարաժամկետ արդյունքների վերաբերյալ վերլուծության բացակայությունը թույլ չի տալիս գիտականորեն հիմնավորված կարծիք կազմել այս վիրահատությունների արդյունավետության վերաբերյալ: Հաշվի առնելով այս հանգամանքները և խնդրի արդիականությունը, անհրաժեշտություն է առաջանում իրականացնել ՀՀ պոպուլյացիայում բարիատրիկ վիրահատական միջամտությունների կարճաժամկետ ու երկարաժամկետ արդյունքների բազմակողմանի վերլուծություն: Դա անխուսափելիորեն կբերի ախտաբանական ճարպակալմամբ հիվանդների մոտ հարակից հիվանդությունների զարգացման և մահացության ցուցանիշների նվազեցման:

Բարիատրիկ վիրահատությունները բերում են հիվանդի ՄՋԻ նվազեցման և հարակից հիվանդությունների բուժման կամ բավարար վերահսկողության հաստատման երկու հիմնական մեխանիզմների՝ սննդի ընդունման սահմանափակման և մալաբսորբցիայի միջոցով: Ըստ այդմ, բարիատրիկ վիրահատությունները բաժանվում են երկու տեսակի՝ սահմանափակող և հիբրիդային: Առաջինի դեպքում իրականացվում է ստամոքսի չափսերի փոքրացում՝ սահմանափակելով վերջինիս կողմից ընդունվող սննդի քանակը: Նման միջամտությունների

թվին են պատկանում ստամոքսի ժապավենի (gastric band) տեղադրումը և ստամոքսի երկայնակի մասնահատումը (sleeve gastrectomy): Հիբրիդային վիրահատությունների պարագայում, սահմանափակումից բացի, նվազեցվում է նաև սննդանյութերի ներծծումը աղեստամոքսային տրակտից: Այն իրականացվում է աղեստամոքսային տրակտի ռեկոնստրուկցիայի, մասնավորապես՝ բարակ աղու որոշ հատվածների շրջանցման միջոցով: Նման միջամտությունների թվին են պատկանում ստամոքսի շրջանցող բերանակցումը ըստ Ռուի (Roux-en-Y gastric bypass), բիլիո-պանկրեատիկ շունտավորումը (biliopancreatic diversion) և այլն:

Լապարոսկոպիկ վիրահատությունները բարիատրիկ վիրաբուժության մեջ սկսել են կիրառվել նախորդ դարի 90-ական թվականների վերջից՝ ընդգծելով վերջինիս մի շարք առավելությունները բաց եղանակով կատարվող վիրահատությունների նկատմամբ: Այսպես, համաձայն առաջին ռանդոմիզացված հետազոտությունների արդյունքների, տարբեր տեսակների լապարոսկոպիկ վիրահատությունների արդյունքում գրանցվել է վիրահատության տևողության, հետվիրահատական բարդությունների և մահճակալային օրերի, ինչպես նաև հետվիրահատական ճողվածքների առաջացման դեպքերի տարբերություն:

Ժամանակի ընթացքում լապարոսկոպիկ միջամտությունը դարձել է բարիատրիկ վիրաբուժության հիմնական եղանակը: Լապարոսկոպիկ բարիատրիկ վիրահատությունների կիրառումից հետո հրապարակվել են վերջինիս վերաբերող մի շարք ուղեցույցեր: Ներկայումս առավել լայն կիրառում է ստացել ստամոքսի երկայնակի մասնահատումը (sleeve gastrectomy): Չնայած նման միջամտությունների արդյունավետությանը ՄՋԻ-ի նվազեցման, գիրությանը ուղեկցող հիվանդությունների բուժման և հիվանդների կյանքի որակի բարելավման հարցում, դրանք հետվիրահատական բարդությունների առաջացման առումով դիսկային են:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ միշտ չէ, որ ՍԼԵՄ-ը գերծ է բարդությունների զարգացման վտանգից և հասնում է ցանկալի արդյունքների՝ հանգեցնելով ակնկալիքներին ոչ համապատասխան քաշի նվազմամբ և ուղեկցող հիվանդությունների անբավարար հետզարգացմամբ հիվանդների սովոր քանակի ձևավորմանը: Բացի դրանից, առանց հետվիրահատական շրջանի համակարգված վարման անհնար է ապահովել քաշի բնականոն, իրատեսական, անվտանգ կորուստը և այնպիսի լուրջ ուղեկցող պաթոլոգիաների հետզարգացումը, ինչպիսիք են II տիպի շաքարային դիաբետը, զարկերակային հիպերտոնիան և այլն:

Հետազոտության նպատակն է ստամոքսի լապարոսկոպիկ երկայնակի մասնահատման եղանակով ախտաբանական ճարպակալումով հիվանդների կյանքի որակի բարելավման գիտական հիմնավորումը, ինչպես նաև, համակցված հիվանդացությամբ (շաքարային դիաբետի, զարկերակային գերճնշում, երակների վարիկոզ և այլն) պայմանավորված մահացության ցուցանիշների նվազեցումը:

Խնդիրներ՝

1. Ուսումնասիրել և համեմատել հիվանդների տարբեր տարիքային խմբերում տարբեր եղանակներով կատարվող ՍԼԵՄ-ի կարճաժամկետ և միջնաժամկետ ազդեցությունը գիրության ցուցանիշների վրա ($40 \text{ կգ/մ}^2 < \text{ՄՋԻ} < 50 \text{ կգ/մ}^2$ 3.1.1 և $\text{ՄՋԻ} > 50 \text{ կգ/մ}^2$ 3.1.2.);

2. Հետազոտել տարբեր եղանակներով կատարվող ՍԼԵՄ-ի ազդեցությունը գիրությամբ տառապող տարբեր խմբերի հիվանդների փոխկապակցված հիվանդությունների վրա ($40 \text{ կգ/մ}^2 < \text{ՄՋԻ} < 50 \text{ կգ/մ}^2$ և $\text{ՄՋԻ} > 50 \text{ կգ/մ}^2$), կատարելով ներխմբային և միջխմբային համեմատական վերլուծություն;

3. Կատարել ՍԼԵՄ-ի տարբեր տեսակների բնութագրիչների համեմատական վերլուծություն $40 \text{ կգ/մ}^2 < \text{ՄՋԻ} < 50 \text{ կգ/մ}^2$ և $\text{ՄՋԻ} > 50 \text{ կգ/մ}^2$ հիվանդների շրջանում

(վիրահատության տևողությունը, ներհիվանդանոցային կացության տևողությունը, արյան կորուստը, վերականգնման ժամկետները և այլն):

4. Գնահատել տարբեր՝ ստանդարտ և մոդիֆիկացված տարբերակներով կատարվող ՍԼԵՄ-ի ազդեցությունը տարբեր խմբերի հիվանդների կյանքի որակի վրա:

5. Մշակել ԱՃ-ի հետ փոխկապակցված կոմորբիդ վիճակների ծանրության միասնական սանդղակ, որի կիրառումը կապահովի ճարպակալման աստիճանի, գլիկեմիայի, լիմֆոստազի, ապնոէի և այլ սոմատիկ ախտաբանական վիճակների ավելի ճշգրիտ գնահատումը:

6. Գնահատել և համեմատել տարբեր եղանակներով կատարվող ՍԼԵՄ-ի հետվիրահատական բարդությունների ցուցանիշները:

7. 40 կգ/մ²-ից բարձր ՄՋԻ ունեցող պացիենտների շրջանում գնահատել գիտելիքների մակարդակը հիվանդագին գիրություն ռիսկի գործոնների, նշանների, ախտանիշների և համակցված հիվանդությունների վերաբերյալ, ինչպես նաև, բարիատրիկ վիրահատություն հանդեպ դիրքորոշումը:

8. Ուսումնասիրել և վերլուծել տարբեր եղանակներով կատարվող ՍԼԵՄ-ի արդյունքների վրա ազդող գործոնները:

9. Կատարված համեմատական վերլուծություն հիման վրա առաջարկել ԱՃ-ով հիվանդների լապարասկոպիկ եղանակով կատարվող բարիատրիկ վիրահատության տեխնիկայի, անեսթեզիոլոգիական ուղեկցության և հետվիրահատական վարման օպտիմալացման ալգորիթմ:

Գիտական նորույթ

1. Առաջին անգամ ախտաբանական ճարպակալումով պացիենտների՝ հետազոտության մեջ ներգրավված պացիենտների շրջանում համակողմանիորեն ուսումնասիրվել է ստամոքսի լապարասկոպիկ երկայնակի մասնահատման արդյունավետությունը՝ ՄՋԻ-ի, կյանքի որակի, փոխկապակցված հիվանդությունների արտահայվածության, ներ- և հետվիրահատական բարդությունների, վիրահատության բնութագրիչների տեսանկյունից:

2. Առաջին անգամ կատարվել է բարիատրիկ պացիենտների բուժման արդյունավետության վրա ազդող սոցիալ-դեմոգրաֆիկ գործոնները, ուղեկցող հիվանդությունները, վիրահատական միջամտության և հետվիրահատական վարման եղանակները և այլն համալիր ուսումնասիրություն:

3. Մեր կողմից լրամշակվել և մոդիֆիկացվել ստամոքսի լապարասկոպիկ երկայնակի մասնահատման վիրահատական տեխնիկան և հետվիրահատական վարման ընթացակարգը, որի կիրառմամբ 40 կգ/մ²-ից բարձր ունեցող պացիենտների շրջանում արձանագրվել է ՄՋԻ-ի նվազեցման համեմատաբար ավելի բարձր ամալիտոտ՝ կյանքի որակի համեմատաբար ավելի բարձր ցուցանիշներով:

4. Մշակվել են 40 կգ/մ²-ից բարձր ունեցող պացիենտների համակցված հիվանդությունների արտահայտվածության նվազեցման և կյանքի որակի բարելավման արդյունավետ մոտեցումներ:

Գործնական նշանակություն

1. Մեր կողմից մշակվել և առաջարկվել է ախտաբանական գիրության հետ կապված համակցված հիվանդությունների ծանրության գնահատման միասնական սանդղակ, որը հիմք է հանդիսանում վիրահատական միջամտության եղանակի, նախա- և հետվիրահատական վարման ընտրության համար:

2. Մոդիֆիկացված ՍԼԵՄ-ի, անզգայացման, նախավիրահատական, և հետվիրահատական վարման ընթացակարգերի ներդրումը կհանգեցնի վիրահատության և հիվանդանոցում գտնվելու տևողության կրճատման,

հետվիրահատական բարդությունների վիճակագրորեն նշանակալի նվազման:

3. ՍԼԵՄ–ի արդյունավետության համապարփակ գնահատմանը զուգահեռ բարիատրիկ պացիենտի վարման միասնական ալգորիթմի կիրառումը զգալիորեն կնվազեցնի գիրությանը տառապող պացիենտների համակցված հիվանդացությունը և մահացությունը:

Ատենախոսության նախնական փորձաքննությունը

Ատենախոսության նախնական փորձաքննությունը կայացել է 05.12.2025 թ. ԵՊԲՀ փորձագիտական հանձնաժողովի նիստում:

Հեղինակի հրատարակած աշխատություններում հետազոտման արդյունքների ընդգրկման լիարժեքությունը

Ատենախոսության թեմայով մասնագիտական պարբերականներում հրատարակվել է 21 գիտական հոդված, որոնցից 7–ը՝ ազդեցության գործակից ունեցող պարբերականներում, 5–ն առանց համահեղինակների: Հրապարակված հոդվածներում լիարժեք ներկայացված են ատենախոսության հիմնական դրույթները: Առկա են 2 գրանցված հեղինակային իրավունքի գյուտի արտոնագիր: Աշխատանքի արդյունքները ներդրվել են և հաջողությամբ կիրառվում են «Շենգավիթ» ԲԿ–ի վիրաբուժական ծառայության կողմից: Հոդվածների նյութերի հավաքագրումը, մշակումը, վերլուծությունը, եզրակացություններն անձամբ հայցորդի գիտական աշխատանքի արդյունքն են:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը

Ատենախոսությունը շարադրված է համակարգչային տպագիր տեքստի 212 էջերում: Բովանդակությունն ընդգրկում է ներածությունը, I գլուխը (սկզբնաղբյուրների վերլուծություն), II գլուխը (հետազոտության նյութը և մեթոդները), III, IV և V գլուխները (սեփական հետազոտությունների արդյունքները), VI գլուխը (ամփոփում), եզրակացությունները, գործնական առաջարկները, հապավումների ցանկը, գրականության ցանկը (185 աղբյուր): Աշխատանքը պատկերազարդված է 32 աղյուսակների և 30 գծապատկերների միջոցով:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԸ ԵՎ ՄԵԹՈՂՆԵՐԸ

Հետազոտության նյութ են հանդիսացել «Շենգավիթ» բժշկական կենտրոն դիմաց ընդգրկված հիվանդների նախա–, ներ– և հետվիրահատական կլինիկական տվյալները, ինչպես նաև հետագա պարբերական այցերի ընթացքում գրանցված հետազոտման տվյալները (following up):

Հետազոտության թիրախային խումբն են 2018–2024թթ. ընթացքում գիրության կապակցությամբ ՍԼԵՄ տարած՝ 20 տարեկանից բարձր, ՄՋԻ՝ 40կգ/մ²–ից բարձր, բարիատրիկ վիրահատական միջամտության հակացուցումներ չունեցող հիվանդները:

Ուսումնասիրության արձանագրությունը համապատասխանում է 1975թ. Հելսինկիի հռչակագրի՝ մարդու հետազոտությունների հանձնաժողովի կողմից հրապարակած էթիկական ուղեցույցներին: Այս հետազոտությանը մասնակցելու համար հավաքագրված բոլոր հիվանդները տեղեկացված են եղել ՍԼԵՄ ընթացակարգի դիսկերի, արդյունքների և հնարավոր մոդիֆիկացիայի մասին: Հետազոտության մեջ ընդգրկված բոլոր մասնակիցներից ստացվել է տեղեկացված համաձայնություն: Հետազոտության հսկողության ժամանակահատվածը սահմանված էր 2 տարի:

Հետազոտության մեջ ընդգրկվել և ուսումնասիրվել է ախտաբանական ճարպակալման համապատասխան նշաններով 497 պացիենտ՝ ընդգրկման և բացառման չափանիշներին համապատասխան: Հիվանդները բաժանվել են 2 կլինիկական խմբի:

I խումբ (246 պացիենտ՝ կին և տղամարդ) ախտաբանական ճարպակալման հատկանիշներով, որոնք ենթարկվել էին ՍԼԵՄ-ի (ստամոքսի լապարասկոպիկ երկայնակի մասնահատում)՝ ստանդարտ ընթացակարգով

II խումբ (251 պացիենտ՝ կին և տղամարդ) ախտաբանական ճարպակալման հատկանիշներով, որոնց կատարվել է ստամոքսի լապարասկոպիկ երկայնակի մասնահատում մոդիֆիկացված եղանակով՝ մոդիֆիկացված հետվիրահատական վարմամբ :

Ամեն կլինիկական խումբը ևս բաժանվել է երկու ենթախմբերի: Յուրաքանչյուր ենթախմբի ընտրանքը սահմանվել է նաև ըստ ՄՁԻ սանդղակի՝

«Ա» ենթախմբի պացիենտներ (291 հոգի)՝ ՄՁԻ = 40–49.9 կգ/մ²,

«Բ» ենթախմբի պացիենտներ (206 հոգի)՝ ՄՁԻ 50 կգ/մ²–ից բարձր:

Աշխատանքի շրջանակներում կատարվել են հետևյալ հետազոտությունները.


- ✓ մարմնի զանգվածի ինդեքսը (ՄՁԻ) հաշվարկված՝ ըստ ստանդարտ բանաձևով;
- ✓ փոխկապակցված հիվանդությունների արտահայտվածությունը՝ ըստ համապատասխան սանդղակի;
- ✓ կյանքի որակի ցուցանիշները՝ ըստ GIQLI, MAQoLII, MOS SF–36 և BAROS գնահատականների;
- ✓ բարդությունների դրսևորման հաճախականությունը՝ 30–օրյա «մեծ» և «փոքր», ինչպես նաև, վաղ հետվիրահատական (վիրահատությունից 72 ժամ հետո) և ուշ բարդություններ՝ ըստ Կլավիեն–Դինդոի դասակարգման;
- ✓ ՍԼԵՄ-ի ընթացակարգի քանակական բնութագրիչները ;
- ✓ 3–րդ աստիճանի ճարպակալմամբ պացիենտների բարիատրիկ վիրահատությունների վերաբերյալ իրազեկվածությունը և դիրքորոշումը;
- ✓ պտղաբերության ֆունկցիայի խանգարումները՝ ըստ հորմոնալ եվ ԳՁՀ–ի արդյունքների;
- ✓ հոգեբանական կարգավիճակի եվ արտաքին տեսքի հետ կապված անհանգստությունը՝ ըստ Դերիֆորդի արտաքին տեսքի սանդղակի (DAS):

Գնահատման արդյունքները համեմատվել են կլինիկական խմբերում և ենթախմբերում վիրահատությունից 6 եվ 24 ամիս անց:

Վիճակագրական վերլուծություն: Հետազոտության համար իրականացվել են Ստյուդենթի T-թեստը (two-sample T test), միջին թվաբանական ցուցանիշների համեմատության համար: Կատեգորիալ տվյալների համեմատության համար օգտագործվել են Chi-square և Ֆիշերի թեստերը: P-value < 0.05 դեպքում ստացված արդյունքները համարվել են վիճակագրորեն հավաստի: Վիճակագրական տվյալների մշակումն իրականացվել է SPSS 23 վիճակագրական ծրագրային փաթեթի միջոցով (Statistical Package for Social Science 23):

➤ Հետազոտության արդյունքները ՄՁԻ-ի ցուցանիշների փոփոխությունները ՍՍԼԵՄ-ԻՑ և ՍՍԼԵՄ- ԻՑ հետո՝


50-ից ցածր տարիքի, 40-ից 50կգ/մ²-ի սահմաններում ՄՁԻ ունեցող տղամարդ և կին հիվանդների մոտ՝ 1-ին և 2-րդ կլինիկական խմբերում, արձանագրվել է ՄՁԻ-ի վիճակագրորեն հավաստի նվազում վիրահատությունից հետո 6-րդ և 24-րդ ամիսներին: Տվյալ ցուցանիշի նվազումը շատ ավելի արտահայտված է եղել 2-րդ կլինիկական խմբի հիվանդների շրջանում: Խմբերի միջև համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ խմբային տարբերությունները 6-րդ ամսում եղել են վիճակագրորեն հավաստի, և այդ տարբերությունները պահպանվել են նաև վիրահատությունից հետո 24-րդ ամսում:



Գծապատկեր 1. ՄՁԻ-ի ցուցանիշների դինամիկ փոփոխությունները 50-ից ցածր տարիքով, 40<ՄՁԻ<50 ունեցող հիվանդների շրջանում՝ ՍՍԼԵՄ-ից և ՍՍԼԵՄ-ից հետո

➤ ՄՁԻ-ի ցուցանիշների դինամիկ փոփոխությունները 50-ից բարձր տարիքով, 40<ՄՁԻ<50 ունեցող հիվանդների շրջանում ստամոքսի ստանդարտ եվ մոդիֆիկացված լապարասկոպիկ երկայնակի մասնահատումից հետո (Գծ. 2):


50-ից բարձր տարիքի, 40-ից 50 կգ/մ²-ի սահմաններում ՄՁԻ ունեցող տղամարդ և կին հիվանդների մոտ՝ 1-ին և 2-րդ կլինիկական խմբերում, վիրահատությունից հետո 6-րդ ամսում արձանագրվել է ՄՁԻ-ի վիճակագրորեն հավաստի նվազում: Նախորդ ենթախմբի նման՝ ավելի արտահայտված նվազում դիտվել է 2-րդ կլինիկական խմբի հիվանդների մոտ: Վիրահատությունից հետո 24 և 6 ամիսների ցուցանիշների համեմատության ժամանակ փոփոխությունները եղել են վիճակագրորեն ոչ հավաստի: Խմբերի միջև համեմատական վերլուծությունը 6-րդ ամսում չի հայտնաբերել վիճակագրորեն հավաստի տարբերություններ, մինչդեռ վիրահատությունից հետո 24-րդ ամսում այս տարբերությունները դարձել են վիճակագրորեն հավաստի:



Գծապատկեր 2. ՄՁԻ-ի ցուցանիշների փոփոխությունները ստանդարտ եվ մոդիֆիկացված ՍԼԵՄ-ից 6 և 24 ամիս անց 50-ից բարձր տարիքի 40<ՄՁԻ<50 ունեցող հիվանդների շրջանում

➤ **ՄՁԻ-ի ցուցանիշների դինամիկ փոփոխությունները 50-ից ցածր տարիքով և 50 կգ/մ²-ից բարձր ՄՁԻ ունեցող հիվանդների շրջանում ՍՍԼԵՄ-ից և ՍՄԼԵՄ-ից հետո (Գծ. 3):**

50-ից ցածր տարիքի, ՄՁԻ 50 կգ/մ²-ից բարձր ունեցող տղամարդ և կին հիվանդների մոտ՝ 1-ին և 2-րդ կլինիկական խմբերում, ի տարբերություն նախորդ ենթախմբի հիվանդների, արձանագրվել է ՄՁԻ-ի վիճակագրորեն հավաստի նվազում վիրահատությունից հետո 6-րդ և 24-րդ ամիսներին (24-րդ ամսվա տվյալները համեմատած 6-րդ ամսվա ցուցանիշների հետ): Այդ ցուցանիշի փոփոխությունների ամպլիտուդը ավելի բարձր է եղել 2-րդ կլինիկական խմբի հիվանդների շրջանում: Խմբերի միջև համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ խմբային տարբերությունները եղել են վիճակագրորեն հավաստի 6-րդ ամսում և պահպանվել են նաև վիրահատությունից հետո 24-րդ ամսում:




Գծապատկեր 3. ՄՁԻ-ի ցուցանիշների փոփոխությունները 50-ից ցածր տարիքով, ՄՁԻ > 50 կգ/մ² ունեցող հիվանդների շրջանում՝ ՍՍԼԵՄ-ից և ՍՄԼԵՄ-ից հետո


➤ **ՄՁԻ-ի ցուցանիշների դինամիկ փոփոխությունները 50-ն անց տարիքով և 50 կգ/մ²-ից բարձր ՄՁԻ ունեցող հիվանդների շրջանում ՍՍԼԵՄ-ից և ՍՄԼԵՄ-ից հետո (Գծ. 4):**

50-ից բարձր տարիքի, ՄՁԻ 50 կգ/մ²-ից բարձր ունեցող տղամարդ և կին հիվանդների մոտ՝ 1-ին և 2-րդ կլինիկական խմբերում, ի տարբերություն նախորդ ենթախմբի հիվանդների, արձանագրվել է ՄՁԻ-ի վիճակագրորեն հավաստի նվազում վիրահատությունից հետո 6-րդ և 24-րդ ամիսներին (24-րդ ամսվա տվյալները համեմատած ինչպես 6-րդ ամսվա, այնպես էլ ելակետային մակարդակի հետ): Այս ցուցանիշի փոփոխությունները բնորոշվել են ավելի բարձր ամպլիտուդով 2-րդ կլինիկական խմբի հիվանդների շրջանում: Խմբերի միջև համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ տարբերությունները եղել են վիճակագրորեն հավաստի 6-րդ ամսում և պահպանվել են նաև վիրահատությունից հետո 24-րդ ամսում:

ԽՈՒՄԲ I, ՄՁԻ, կգ/մ²



ԽՈՒՄԲ II, ՄՁԻ, կգ/մ²



Գծապակեր 4 ՄՁԻ-ի ցուցանիշները ստանդարտ և մոդիֆիկացված ՍԼԵՄ-ից 6 և 24 ամիս անց

ՍՏԱՆԴԱՐՏ ԵՎ ՄՈԴԻՖԻԿԱՑՎԱԾ ՍԼԵՄ-Ի ԱՃԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՃ-ՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՀԻՎԱՆԴԱՑՈՒԹՅԱՄԲ ԸՆԹԱՑՔԻ ՎՐԱ (ԳԾ. 5 և 6):

Սույն հետազոտությամբ առավելապես շեշտադրվում են գիրության համար պաթոգենետիկ թիրախային նոզոլոգիաների արտահայտվածության ցուցանիշների փոփոխությունները նախքան վիրահատությունը (ՍՍԼԵՄ կամ ՍՄԼԵՄ) և վիրահատությունից 24 ամիս անց ցուցանիշների հետ համեմատական գնահատման միջոցով:

Այս նպատակով մեր կողմից ստեղծվել է ԱՃ-ի հետ փոխկապակցված կոմորբիդ վիճակների ծանրության գնահատման սանդղակ, որը ներառում է ճարպակալման աստիճանը, գլխկեմիայի, լիմֆոստազի, ապնեդի և այլ սոմատիկ ախտաբանական վիճակների գնահատման արդյունքները: Յուրաքանչյուր փոխկապակցված հիվանդության համապատասխան աստիճանի համար տրվել է 0,1,2 կամ 3 միավոր: Միավորների առավելագույն քանակը 3-ն է, նվազագույնը՝ 0:

➤ ՍԼԵՄ տարած պացիենտների կոմորբիդության ցուցանիշների փոփոխությունները՝ խումբ i -ում


Ներկայացված տվյալների համաձայն առաջին կլինիկական խմբի Ա և Բ ենթախմբերի պացիենտների շրջանում կոմորբիդության առանձին ցուցանիշների սկզբնական մակարդակների տարբերությունները կրում էին հավաստի բնույթ: Այս տարբերությունները, մասնավորապես, առավել արտահայտված էին լիմֆոստազի ($p < 0,0001$, CI 95% [0,809–0,891], $\Delta S=63,4\%$), արթրոզի ($p < 0,0001$, CI 95% [1.281–1.473], $\Delta S=112.2\%$), ապնեդի ($p < 0,0001$, CI 95% [–0,486 – 0,614], $\Delta S= 36,2\%$) և շաքարային դիաբետի ($p < 0,0001$, CI 95% [0,606 – 0,734], $\Delta S= 35,3\%$) ցուցանիշներում: Ի հակադրություն՝ դիսլիպիդեմիայի և սրտային անբավարարության ցուցանիշների միջև չի արձանագրվել հավաստի միջխմբային տարբերություն ($p < 0,05$):

«Ա» կլինիկական ենթախմբում կոմորբիդության բաղադրիչների՝ երակետային ցուցանիշների համեմատությամբ նվազումը առավել արտահայտված էր դիսլիպիդեմիայի ($p < 0,0001$, CI95% [–0.454––0.386], $\Delta S=31,4\%$):


«Բ» ենթախմբում վիրահատությունից առաջ և 24 ամիս անց առանձին ախտաբանությունների ցուցանիշների համար նույնպես արձանագրվել է

տարբերությունների հավաստիությունը: Համաձայն մեր դիտարկման՝ Բ ենթախումբի պացիենտների համապատասխան ցուցանիշները ենթարկվել են ավելի քիչ արտահայտված փոփոխությունների: Ուշագրավ է այն փաստը, որ Բ կլինիկական ենթախումբի պացիենտների շրջանում վիրահատությունից 24 ամիս անց սոմատիկ ծանրաբեռնվածության առանձին բաղադրիչների ցուցանիշների տեղաշարժերը պայմանավորված էին առավել արտահայտված ճարպակալմամբ, և թեև հավաստի փոփոխված էին սկզբնական արժեքների համեմատ, սակայն, 24 ամիսների ընթացքում ցուցանիշներից ոչ մեկը բացի դիսլիպիդեմիայից ($p < 0,0001$, CI95% [$-0.709 - 0,231$], $\Delta S=31,4\%$) չէր գերազանցել 20%-անոց շեղման չափը՝ ելակետային ցուցանիշների համեմատությամբ:

Վիրահատությունից 24 ամիս անց կոմորբիդ հիվանդությունների արտահայտվածության մակարդակները նշանակալիորեն տարբերվում էին միմյանցից՝ բացառությամբ զարգերակային հիպերտենզիայի ($p=0,66$, CI95% [$-0.003-0.083$], $\Delta S=2,5\%$) և արտրոզի ($p>0.01$, CI95% [$1.090 - 1.230$], $\Delta S=1,1\%$) ցուցանիշների: Առավել արտահայտված միջխմբային տարբերությունը գրանցվել է լիմֆոստազի ցուցանիշների կողմից ($p<0.0001$, CI95% [$-0.698 - 0.789$], $\Delta S=67.9\%$):




Գծապատկեր 5. ՍՍԼԵՄ տարած պացիենտների կոմորբիդության ցուցանիշների փոփոխությունները ենթախումբ «Ա»-յում (վիրահատությունից առաջ և 24 ամիս հետո)




Գծապատկեր 6. ՄՍԼԵՄ տարած պացիենտների կոմորբիդության ցուցանիշների փոփոխությունները ենթախումբ «Բ»-յում (վիրահատությունից առաջ և 24 ամիս հետո)

➤ **ՍԼԵՄ տարած պացիենտների կոմորբիդության ցուցանիշների ոփոխությունները խումբ ii-ում**

Ներկայացված տվյալներից տեսանելի է որ հետազոտված պացիենտների երկու ենթախմբերի շրջանում կոմորբիդ ախտաբանությունների կլինիկական դրսևորումները որոշակի չափով հետ են զարգացել կատարված վիրահատական միջամտությունների և հետվիրահատական վարման արդյունքում:



Գծապատկեր 7. ՄՍԼԵՄ տարած ԱՃ-ով հիվանդների կոմորբիդության ցուցանիշների փոփոխությունը ենթախումբ «Ա»-յում



Գծապատկեր 8. ՄՍԼԵՄ տարած ԱՃ–ով հիվանդների կոմորբիդության ցուցանիշների փոփոխությունը ենթախումբ «Բ»-յում

«Ա» և «Բ» կլինիկական ենթախմբերի պացիենտների կոմորբիդության առանձին ցուցանիշների սկզբնական մակարդակներում առաջին և երկրորդ կլինիկական ենթախմբերի պացիենտների շրջանում գրանցվեցին հավաստի տարբերություններ: Մասնավորապես, առավել արտահայտված է այս տարբերությունները շաքարային դիաբետի ($p < .001$, CI 95% [0.016; 0.033], $\Delta S = 37.13\%$), ապնոէի ($p < .001$, CI 95% [0.026; 0.027], $\Delta S = 37.21$) և լիմֆոստագի ($p < .001$, CI 95% [0.014; 0.028], $\Delta S = 54.36$) ցուցանիշներում:

«Ա» ենթախմբի պացիենտների շրջանում կոմորբիդության բաղադրիչների նվազումը նույնպես բնութագրվում է որպես հավաստի (Ելակետային ցուցանիշների համեմատությամբ առավել արտահայտված շեղումներ են գրանցվել՝ $p < .001$, CI 95% [0.016; 0.014], $\Delta S = 49,19\%$ – շաքարային դիաբետի, $\Delta S = 36,54\%$, CI 95% [0.026; 0.015], $p < .001$ – ապնոէի և $p < .001$, CI 95% [0.024; 0.023], $\Delta S = 31,37\%$ – արտրոզի պարագայում):

Իր հերթին, Բ ենթախմբի պացիենտների համապատասխան ցուցանիշները ենթարկվել են ավելի քիչ արտահայտված փոփոխությունների: Բուժման արդյունավետությունն արտահայտվել է, մասնավորապես, կոմորբիդության ընդհանուր ցուցանիշի մակարդակի տեղաշարժով՝ սկզբնական արժեքի համեմատ հավաստի նվազմամբ ($p < .001$, CI 95% [0.264; 0.177], $\Delta S = 24.04\%$) և դրա բաղադրիչներով: Մեր կարծիքով, այստեղ կարևոր է այն փաստը, որ Բ կլինիկական ենթախմբի պացիենտների շրջանում վիրահատությունից 24 ամիս անց սոմատիկ ծանրաբեռնվածության առանձին բաղադրիչների ցուցանիշների տեղաշարժերը, թեև պայմանավորված էին առավել արտահայտված ճարպակալմամբ, սակայն, այդուհանդերձ հավաստի փոփոխված էին սկզբնական արժեքների համեմատ: 24 ամիսների ընթացքում ցուցանիշների մեծ մասը գերազանցեցին 20%–անոց շեղման պատենշը՝ վիրահատությունից առաջ համապատասխան ցուցանիշների համեմատությամբ: Երկրորդ կլինիկական ենթախմբում վիրահատությունից առաջ և վիրահատությունից 24 ամիս անց առանձին ցուցանիշների համար տարբերությունների հավաստիությունն արձանագրվել է տեղաշարժերի ցածր ամպլիտուդ:

Վիրահատությունից 24 ամիս անց ասոցիատիվ կոմորբիդության ընդհանուր ցուցանիշների համեմատությունը նաև հավաստի տարբերություններ է հայտնաբերել Ա և Բ կլինիկական ենթախմբերի միջև ($\Delta S=36.27\%$, $p<.001$, CI 95% [0.207;0.177]): Ա և Բ կլինիկական ենթախմբերի պացիենտների կոմորբիդ ծանրաբեռնվածության բոլոր այլ ցուցանիշների մակարդակները նշանակալիորեն տարբերվում էին միմյանցից (առավել արտահայտված են շաքարային դիաբետի ($\Delta S= 83.21\%$, $p<.001$, CI 95% [0.014; 0.035]), ապնեյի ($\Delta S= 57.41\%$, $p<.001$, CI 95% [0.015;0.015]), արտրոզի ($\Delta S= 75.32\%$, $p<.001$, CI 95% [0.023;0.021]) և դիսլիպիդեմիայի ($\Delta S=46.85\%$, $p<.001$, CI 95% [0.048;0.110]) պարագայում:

ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՍԼԵՄ-Ի ՏԱՐԲԵՐ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Հետազոտության սկզբնական փուլում I և II խմբերի պացիենտների համապատասխան տարիքային ենթախմբերի միջև էական տարբերություններ չեն գրանցվել:

Առաջին խմբի I₁ ենթախմբի իգական սեռի պացիենտների շրջանում սկզբնական արժեքների համեմատությամբ 24 ամիս անց GIQLI ցուցանիշի աճը բնութագրվում էր հետևյալ տեղաշարժով՝ $\Delta S = 10.7\%$, $p=.059$ CI 95% [-18.96-0.36], նույն ենթախմբի առական սեռի պացիենտների շրջանում համապատասխան ցուցանիշի աճը կազմել է $\Delta S = 10.3 \%$, $p=.064$ CI 95% [-17.91-0.51], մինչդեռ I₂ ենթախմբի կին պացիենտների շրջանում աղետամոքսային ախտանիշների արտահայտվածությունը բնութագրվում էր $\Delta S = 9,8\%$, $p=.054$ CI 95% [-15.55-0.15] իսկ տղամարդկանց շրջանում՝ $\Delta S = 13.3\%$, $p=.056$, CI 95% [-20.87-0.27] ցուցանիշներով (Գծ. 9):

Երկրորդ խմբի II₁ ենթախմբի իգական սեռի պացիենտների շրջանում սկզբնական արժեքների համեմատությամբ 24 ամիսից հետո GIQLI –ի ցուցանիշի աճը կազմել է $\Delta S = 34.8\%$, $p=.0001$ CI 95% [35.64-46.35] և առական սեռի պացիենտների շրջանում համապատասխան ցուցանիշի տեղաշարժը գնահատվել է՝ $\Delta S = 55.8 \%$, $p=.0001$ CI 95% [40.34-52.06]: Ընդ որում, ելնելով վերը նշված ցուցանիշների ենթախմբային համեմատությունից II₂ ենթախմբի իգական և արական սեռի պացիենտների շրջանում տվյալ ցուցանիշների դինամիկան համապատասխանաբար բնութագրվում էր հետևյալ կերպ՝ $\Delta S = 44.9\%$, $p=.0001$, CI 95% [27.86-40.34] և $\Delta S = 57.1\%$, $p=.0001$, CI 95% [36.54-50.46]:

Երկրորդ խմբի երկու ենթախմբերի GIQLI–ի միջին ցուցանիշները ցուցադրում են հավաստի փոփոխությունները 24 ամիս անց ելակետային ցուցանիշների համեմատությամբ: Մինչդեռ առաջին խմբի ենթախմբերում վերոնշյալ ցուցանիշների միջև հավաստի տարբերություն չի գրանցվել:

Անդրադառնալով MAQoLII–ի գնահատման արդյունքներին, նշենք, որ մինչև հետվիրահատական թերապիայի մեկնարկը միջին միավորը I₁ և I₂ ենթախմբերի տղամարդ պացիենտների շրջանում կազմել է համապատասխանաբար՝ 0.83 ± 0.27 և 0.72 ± 0.27 : Առաջին խմբի I₁ և I₂ ենթախմբերի կանանց համար այդ միավորները կազմել են համապատասխանաբար $0.74.6 \pm 0.26$ –ի և 0.70 ± 0.32 , II₁ և II₂ ենթախմբերի արական սեռի պացիենտների շրջանում համապատասխանաբար՝ 0.72 ± 0.25 և 0.67 ± 0.22 : II₁ ենթախմբի կանանց շրջանում MAQoLII–ի միջին միավորը տատանվել է եղել է 0.68 ± 0.24 և II₂ ենթախմբի կանանց շրջանում՝ 0.67 ± 0.26 –ի միջակայքերում: Հետազոտության սկզբնական փուլում I և II խմբերի պացիենտների համապատասխան տարիքային ենթախմբերի միջև էական տարբերություններ չեն գրանցվել (Գծ. 10):

Առաջին խմբի I₁ ենթախմբի իզական և առական սեռի պացիենտների շրջանում սկզբնական արժեքների համեմատությամբ 24 ամիս անց MAQoLII-ի ցուցանիշի աճը բնութագրվում էր համապատասխանաբար հետևյալ դինամիկայով՝ $\Delta S = 54.0\%$, $p = .049$ CI 95% $[-0.80 - (-0.001)]$ և $\Delta S = 26.5\%$, $p = .06$ CI 95% $[0.24 - 7.52]$, մինչդեռ I₂ ենթախմբի պացիենտների MAQoLII-ի ցուցանիշների փոփոխությունը բնութագրվում էր հետևյալ կերպ՝ $\Delta S = 34.2\%$, $p = .06$, CI 95% $[0.50 - 0.02]$ և $\Delta S = 37.5\%$, $p = .06$, CI 95% $[-0.56 - 0.02]$ ՝ կին և տղամարդ պացիենտների համար համապատասխանաբար:

Երկրորդ խմբի II₁ ենթախմբի իզական սեռի պացիենտների շրջանում սկզբնական արժեքների համեմատությամբ 24 ամսից հետո MAQoLII-ի ցուցանիշի աճը կազմել է $\Delta S = 195.5\%$, $p = .0001$, CI 95% $[1.15 - 1.70]$, առական սեռի պացիենտների շրջանում համապատասխան ցուցանիշի աճը կազմել է $\Delta S = 118.3\%$, $p = .0001$, CI 95% $[1.15 - 1.57]$: Երկրորդ խմբի II₂ ենթախմբի իզական և արական սեռի պացիենտների շրջանում տվյալ ցուցանիշի դինամիկան բնութագրվում էր համապատասխանաբար հետևյալ տեղաշարժերով՝ $\Delta S = 194.0\%$, $p = .0001$, CI 95% $[1.01 - 1.59]$ և $\Delta S = 197.0\%$, $p = .0001$, CI 95% $[1.08 - 1.56]$:

Առաջին խմբի երկու ենթախմբերի MAQoLII-ի միջին ցուցանիշները ցուցադրում են հավաստի փոփոխությունները 24 ամիս անց ելակետային ցուցանիշների համեմատությամբ: Մինևույն ժամանակ երկրորդ խմբի ոչ մի ենթախմբում MAQoLII-ի ցուցանիշների հավաստի տարբերություն չի գրանցվել:

Հետազոտության սկզբնական փուլում I և II խմբերի պացիենտների MOS SF-36-ի համակարգի գնահատման արդյունքների համապատասխան տարիքային ենթախմբերի միջև էական տարբերություններ չեն գրանցվել (Գծ. 11):

Առաջին խմբի I₁ ենթախմբի իզական սեռի պացիենտների շրջանում սկզբնական արժեքների համեմատությամբ 24 ամիս անց MOS SF-36-ի ցուցանիշի աճը բնութագրվում էր $\Delta S = 8.6\%$, $p = .071$, CI 95% $[-0.30 - 6.82]$, նույն ենթախմբի առական սեռի պացիենտների շրջանում համապատասխան ցուցանիշի աճը կազմել է $\Delta S = 4.0\%$, $p = .065$ CI 95% $[0.24 - 7.52]$, նույն խմբի I₂ ենթախմբի կին պացիենտների շրջանում MOS SF-36-ի ցուցանիշը բնութագրվում էր $\Delta S = 4.1\%$, $p = .056$, CI 95% $[-0.1 - 8.06]$ իսկ տղամարդկանց շրջանում՝ $\Delta S = 4.8\%$, $p = .057$, CI 95% $[-0.13 - 8.49]$:

Երկրորդ խմբի I₁ ենթախմբի իզական սեռի պացիենտների շրջանում սկզբնական արժեքների համեմատությամբ 24 ամսից հետո MOS SF-36-ի ցուցանիշի աճը կազմել է $\Delta S = 29.7\%$, $p = .0001$, CI 95% $[-29.83 - 22.73]$, առական սեռի պացիենտների շրջանում համապատասխան ցուցանիշի աճը կազմել է $\Delta S = 31.8\%$, $p = .0001$, CI 95% $[-31.64 - 25.32]$: Երկրորդ խմբի II₂ ենթախմբի իզական սեռի պացիենտների շրջանում տվյալ ցուցանիշի դինամիկան բնութագրվում էր $\Delta S = 35.8\%$, $p = .0001$, CI 95% $[28.03 - 33.77]$, իսկ տղամարդկանց շրջանում փոփոխության միջակայքը կազմում էր $\Delta S = 39.3\%$, $p = .0001$, CI 95% $[20.95 - 27.85]$:


Առաջին խմբի երկու ենթախմբերի MOS SF-36-ի միջին ցուցանիշները ցուցադրում են հավաստի փոփոխությունները 24 ամիս անց ելակետային ցուցանիշների համեմատությամբ: Մինչդեռ երկրորդ խմբի ոչ մի ենթախմբում հավաստի տարբերություն չի գրանցվել:

Առաջին և երկրորդ խմբերի միջև 24 ամիս անց դիտվում են վստահելի տարբերություններ համապատասխանաբար 1 և 2 ենթախմբերում:

BAROS. Ինչպես երևում է գծապատկեր Գծապատկեր 12-ից, վիրահատությունից 24 ամիս անց BAROS-ի ցուցանիշների երկու տարիքային ենթախմբերում զգալի տարբերություն է գրանցվել հետազոտված I և II խմբերի, մասնավորապես՝ I₁ և II₁ ենթախմբերի պացիենտների միջև $\Delta S = 45.53\%$, $p = .0001$, CI 95% $[-4.38 - 2.65]$ և $\Delta S = 36.65\%$, $p = .0001$, CI 95% $[-3.52 - 2.$

09] համապատասխանաբար տղամարդկանց և կանանց համար: I₂ և II₂ ենթախմբերի BAROS ցուցանիշները բնութագրվում էին հետևյալ տարբերությամբ՝ $S=44.3\%, p=.0001, CI95\% [4.27-2.51]$ և I₂ և II₂ ենթախմբերի BAROS ցուցանիշները կանանց համար հետևալն էին՝ $S=45.38\%, p=.0001, CI95\% [-4.21-2.51]$:

**ԳՈՂԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ 50-ԻՑ ԳԱԾՐ ՏԱՐԻՔԻ
ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՍՍԼԵՄ-ԴՐՏ ԵՒ ՄՈՂԻՖԻԿԱՑՎԱԾ ՍԼԵՄ-ԻՑ ՀԵՏՈ
(ՄՁԻ 40-50 կգ/մ²)**





Գծապատկեր 9. Կյանքի որակի ցուցանիշների նկարագրական տվյալները 50-ից ցածր տարիքի ՍՍԼԵՄ-ից և ՍՍԼԵՄ-ից անմիջապես հետո և 24 ամիս անց 40-50 ՄՁԻ ունեցող պացիենտների շրջանում:



Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ վիրահատությունից 24 ամիս անց ՍԼԵՄ-ի և մոդիֆիկացված, և ստանդարտ եղանակները հանգեցրել են ելակետային տվյալների համեմատությամբ կյանքի որակի ցուցանիշների դրական տեղաշարժերի (համաձայն GIQLI, MAQoLII և MOS, SF-36 գնահատականների): Ընդ որում, նշված տեղաշարժերը կրել են հավաստի բնույթ միայն երկրորդ կլինիկական խմբում:

Ավելին, միջխմբային համեմատությունը բացահայտել է կյանքի որակի ցուցանիշների բոլոր դիտարկված ցուցանիշների հավաստի տարբերություն ի օգուտ մոդիֆիկացված ՍԼԵՄ-ի: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ մոդիֆիկացված ՍԼԵՄ-ը կայուն դրական ազդեցության շնորհիվ կարող է հանդես գալ որպես ստանդարտ ՍԼԵՄ-ի արդյունավետ այլընտրանք հիվանդագին ճարպակալմամբ հիվանդների համար:


BAROS-ի ցուցանիշների երկու քաշային ենթախմբերում նշանակալի տարբերություն է գրանցվել I և II խմբերի միջև: Ընդ որում՝ այս պնդումն արդիական է երկու տարիքային կատեգորիաների համար, ինչը անուղղակիորեն ևս վկայում է մոդիֆիկացված մեթոդիկայի ավելի բարձր արդյունավետության մասին՝ բարիական հիվանդների կյանքի որակի վրա ազդեցության արումով:





Գծապատկեր 10. MAQoLII ցուցանիշները հիվանդների շրջանում ՍՍԼԵՄ և ՍՄԼԵՄ-ից հետո



Գծապատկեր 11. MOS SF-36 ցուցանիշները հիվանդների շրջանում ՍՍԼԵՄ և ՍՄԼԵՄ-ից հետո ՄՁԻ 40-50 կգ/մ²




Գծապատկեր 12. BAROS ցուցանիշները 50-ից բարձր տարիքի հիվանդների շրջանում ՍՍԼԵՄ ԵՒ ՍՍԼԵՄ-ից հետո (մզի >50 կգ/մ²)



Գծապատկեր 13. ՍԼԵՄ-ի սպանդարտ և մոդիֆիկացված եղանակների ներվիրահատական և հերվիրահատական ընթացքի բնութագրիչների համեմատական վերլուծությունը

Ստացված տվյալների վերլուծության արդյունքում հաստատվեց առաջին և երկրորդ կլինիկական խմբերի համապատասխան ենթախմբերում որոշ ցուցանիշների տարբերությունների հավաստիությունը:

Մասնավորապես, ստանդարտ եղանակի՝ մոդիֆիկացված ընթացակարգի համեմատությամբ 90 րոպեն գերազանցող վիրահատությունների ավելի բարձր հաճախականությունը, «Բ» ենթախմբի հիվանդների շրջանում ներվիրահատական բարդությունների ավելի բարձր հաճախականությունը (երկու կլինիկական խմբերի «Ա» ենթախմբում դրանց բացակայության պարագայում) և համեմատաբար ավելի երկար հիվանդանոցային կացությունը:



Գծապատկեր 14. ՍԼԵՄ– ի ստանդարտ և մոդիֆիկացված եղանակների ներվիրահատական և հետվիրահատական ընթացքի բնութագրիչները

Այնուամենայնիվ, կրկնակի հոսպիտալացման, ռելապարոսկոպիկ վիրահատության, այլ տեսակի վիրահատական միջամտության փոխակերպման կամ վիրահատության ընթացքում ընդունված հեղուկի քանակին վերաբերող ցուցանիշների համեմատությամբ էական տարբերություններ չեն գրանցվել:

30–օրյա հետվիրահատական բարդությունների (ըստ Կլավինեն–Դինդոյի դասակարգման) հաճախականություն

Խմբերի միջև համեմատությունը ցույց է տալիս «փոքր» և «մեծ» բարդությունների մակարդակների հուսալի տարբերություն ($\chi^2 = 0,412, p = .0316, CI95\% [0,1891-0,9250]$ և $\chi^2 = 0,196, p = .0092, CI95\% [0,057 - 0,9]$) համապատասխանաբար փոքր և մեծ բարդությունների համար: Հարաբերական ռիսկերի զգալի նվազում է արձանագրվել փոքր և խոշոր բարդությունների համապատասխանաբար 58.8% և 80.4% դեպքերում: Բարդությունների ընդհանուր ցուցանիշները զգալի տարբերություն արձանագրեցին I և II խմբի միջև ($\chi^2 = 0,317, \chi^2_{ns} = 68,3\%, p = .0006, CI 95\% [0,164-ից 0,612]$):

Ստանդարտ և մոդիֆիկացված ՍԼԵՄ–ի ենթարկված հիվանդների շրջանում բարիատրիկ վիրահատությունից հետո առավել սպեցիֆիկ ներվիրահատական, վաղ հետվիրահատական (առաջին 72 ժամվա ընթացքում) և հեռակա բարդությունների վերաբերյալ տվյալները ներկայացված են ստորև:

I խմբի հիվանդների շրջանում ներվիրահատական և վաղ (առաջին 72 ժամվա ընթացքում) բարդությունների (սուր արյունահոսություն և արտահոսք ծայրատից) հանդիպման հաճախականությունը հուսալիորեն ավելի ցածր էր II խմբի հիվանդների համեմատությամբ ($P < 0.05$): χ^2 ցուցանիշները սուր արյունահոսության և արտահոսքի դեպքում կազմել են համապատասխանաբար 0,123 և 0,121:

Հեռակա բարդությունների (լեղաքարային հիվանդություն, ԳԷՌՀ, թրոմբոզ (ներառյալ ոչ օբստրուկտիվ), սնուցման խանգարումներ և սակավարյունություն) ցուցանիշները II խմբի շրջանում նույնպես բնութագրվում էին ցածր մակարդակներով I խմբի հիվանդների համեմատությամբ: Տարբերությունը վստահելի էր (p -արժեք < 0.05) վերոնշյալ բարդությունների դեպքում $\chi^2 = 0.381, \chi^2 = 0.374, \chi^2 = 0.123, \chi^2 = 0.22$ և $\chi^2 = 0.358$ ՝ համապատասխանաբար լեղաքարային հիվանդության, ԳԷՌՀ, թրոմբոզի, թերսնման և սակավարյունության համար:

Երիկամաքարային հիվանդության և դեպրեսիայի ցուցանիշների համեմատությունը կլինիկական խմբերի միջև որևէ էական տարբերություն չի արձանագրել (p -արժեք $>.05$, $\chi^2=0.392$ և $\chi^2=0.844$ համապատասխանաբար երիկամաքարային հիվանդության և դեպրեսիայի համար):

Ինչպես երևում է վերը նշված տվյալներից, տարբեր հետազոտողների կողմից արձանագրվել են բարդությունների դրսևորման տարբեր ցուցանիշներ: Այս հակասությունը մեզ դրդեց կատարել բարդությունների վեաբերյալ տվյալների վերլուծություն ՀՀ ազգաբնակչության շրջանում:

Մոդիֆիկացված տեխնիկայի արդյունավետության գնահատման ճշգրտությունը բարձրացնելու նպատակով հաշվարկվել են χ^2 և χ^2 -Ն ցուցանիշները: Ստանդարտ և մոդիֆիկացված ՍԼԵՄ խմբերի հիվանդների շրջանում կատարված վիճակագրական տվյալների մշակումը ցույց է տալիս «մեծ» և «փոքր» բարդությունների հետվիրահատական 30-օրյա շրջանում դրսևորման ցուցանիշների զգալի տարբերություն՝ համաձայն Կլավիեն-Դինդոյի դասակարգման (p -արժեք $<.05$): Մյուս կողմից, ներվիրահատական, վաղ հետվիրահատական (վիրահատությունից 72 ժամ հետո) և ուշ բարդությունների տարածվածության ցուցանիշները տարաբնույթ էին ծայրատից սուր արյունահոսության և ստամոքսի պարունակության արտահոսքի հավաստի միջխմբային տարբերությունը ի հակադրություն սուր խցանման միանման ցուցանիշներին երկու կլինիկական խմբերում:

Չնայած որոշ ուշ բարդությունների ցածր հարաբերական ռիսկի (երիկամաքարային հիվանդություն ($\chi^2=0,392$) և դեպրեսիա ($\chi^2=0,844$)) և հարաբերական ռիսկի զգալի կրճատմանը (χ^2 -Ն=60,8% երիկամաքարային հիվանդության և (χ^2 -Ն=15,6% դեպրեսիայի համար), մոդիֆիկացված ՍԼԵՄ-ով բուժված հիվանդների շրջանում տարբերությունը ոչ հուսալի էր (p -value $>.05$ երկու բարդությունների դեպքում էլ):

Մեր ստացած արդյունքները 40-ից բարձր ՄՁԻ-ով հիվանդների շրջանում «մեծ» և «փոքր» բարդությունների զգալի կրճատման վիճակագրությամբ հաստատում են մոդիֆիկացված ՍԼԵՄ-ի հարաբերականորեն ավելի բարձր արդյունավետությունը:

Վերարտադրողականության գործառույթները բարիատրիկ կին պացիենտների շրջանում (Աղ. 1 , 2)

Ինչպես երևում է վերը նշված տվյալներից, հետազոտության սկզբնական փուլում առաջնային անպտղության, երկրորդային անպտղության, ԼՀ-ի, ԼՀ/ՖԽՀ-ի, ՍՀԿԳ-ի, տեստոստերոնի և էստրադիոլի ցուցանիշները չէին բնութագրվում հավաստի միջխմբային տարբերությամբ: Առաջին խմբի հիվանդների մոտ ուսումնասիրված գրեթե բոլոր պարամետրերը, բացառությամբ առաջնային անպտղության հաճախականության, վիրահատական միջամտությունից հետո ենթարկվել են զգալի փոփոխությունների: Երկրորդ խմբի հիվանդների մոտ, առաջնային անպտղությունից բացի, բացառություն են կազմել են նաև երկրորդային անպտղության և տեստոստերոնի ցուցանիշները: Մյուս կողմից, միջխմբային հետվիրահատական համեմատությունը ցույց է տալիս ՍԼԵՄ-ից հետո ոչ հավաստի տարբերություններ տարբեր տարիքային խմբերի հիվանդների մոտ հետևյալ՝ դաշտանային ցիկլի խանգարումների, առաջնային անպտղության, անօվուլյացիայի, ՁՄԾ-ի, ՍՀԿԳ-ի, տեստոստերոնի, էստրադիոլի պարամետրերում:

Հետազոտված խմբերի կլինիկական բնութագրերի համեմատությունը բարիատրիկ վիրահատությունից առաջ և հետո

| Ցուցանիշ | Վիճակագրական ցուցանիշ | Խումբ I vs Խումբ II հետազոտության սկզբում | Խումբ I հետազոտությունից առաջ և հետո | Խումբ II հետազոտությունից առաջ և հետո | Խումբ I vs Խումբ II հետազոտության վերջում |
|--------------------------|-----------------------|---|--------------------------------------|---------------------------------------|---|
| ԴՑ խանգարումներ, n (%) | ՀՌ | – | 0.352 | 0.219 | – |
